

ՀՆԶԱԿ

ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ՕՐԳԱՆ ՀՆԶԱԿԵԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ Ա Պ Ս Տ Ա Մ Բ Ո Ւ Թ Ւ Ի Ն Կ Ի Լ Ի Կ Ի Ա Յ Ո Ւ Մ.

ՀԱՅՈՒԹԵԱՆԸ.

Գործը կատարվեցաւ: Այսօր Օգոստոսն ապստամբ է, Չօր-Մարգուանն ապստամբ է, Արեւիկան ապստամբ է, Հաճին, Մարաշ՝ շարժման մեջ և շուտով ապստամբ կը լինեն ամբողջ Ալեքիկան և ուրիշ վայրեր: Այսօր Ազատութեան ու Յեղափոխութեան կարմիր դրոշակը ծածանելով իրանց ձեռքին, սկսած Օգոստոսի և Հաճինի լեռներէն մինչև Չօր-Մարգուան և մինչև Արեւիկա, Հնչակեան օղեւորված զինքը յաղթական արշաւանքներ են անում թիւրքաց զօրքերի դէմ: Սարսափահար թշնամին ամօթահար պարտութիւններ է կրում ամեն օր, ամեն ժամ, թողնելով Հնչակեան ապստամբների ձեռքը բազմաթիւ զերինք իրանցից, սպանաւթներ, աւաններ, սպանական զինքեր: Աւ Հնչակեան քաջարի ապստամբների ձեռքն են անցնում յաջորդաբար մի շարք թիւրքական աւաններ: Չուգուր-Հիսար անվաճ, Խանկիլի՝ անվաճ, Գեօնդէ՝ անհրկած, Չօր-Մարգուան աղաւ հռչակված, Օգոստոսի բէյի և Նարը վայրերը ոտքի տակ առած, անձնատուր եղած իր բազմաթիւ զօրքերով, թնդանութեամբ և ամեն ուղղամտութեամբ ու գէղեցում Օգոստոսի ստակալի զօրանոցը, ամեն ու երկաթեայ զօրանոցը, որի թնդանութեամբ միշտ ուղղված էին Օգոստոսի վրայ, այն զօրանոցը, որ ամբողջ Օգոստոսի ու Աստանի վրան մի շարադուշակ աղէտի պէս հսկայատիպ ու դարհուրելի բարձրանում էր: Աւ ահա այդ բոլորից յետոյ ապստամբների կողմից այլ ևս անկախ ու աղաւ է հռչակվում իրանց քաղաք ու արի Օգոստոսը, մինչդեռ միեւնոյն ժամանակ նրանք շարունակում են իրանց յաղթական ընթացքն ու արշաւանքը դէպի Մարաշ և այլ կողմեր: Աւ այսօր ամբողջ Ալեքիկան և Հայաստանի ուրիշ վայրեր սկսում են արձագանք տալ Օգոստոսի ապստամբութեան, որ Ալեքիկայի ընդհանուր ապստամբութեան նշանն է:

Նորանոր ծակառամարտեր ու յաղթութիւններ արձագանք նկարվում են Ալեքիկայի և այլ տեղերի հայկական փառաւոր հօրիջների վրայ: Այդ մեծ ծակառամարտերը և մերոնց յաղթութիւնները պայմանն են Հայութեան և Հայաստանի ու Ալեքիկայի փրկութեան ու ազատութեան:

Մի կողմից անընդհատ կռիւ ու յարստեւ գործի մեջ Հայաստանում ամեն թշնամիների դէմ, Հնչակեան Առաւելցութիւնն միւս կողմից տարիներից ի վեր առաջ էր մղում հարկաւոր պատրաստութիւններն ապստամբութիւն բարձրացնելու Ալեքիկայում և Հայկալի նահանգում, իր գրծակի տակ համախմբելով ու կազմակերպելով այն տեղերի Հայերին: Բազմաթիւ տասնեակ անձնուէր պատգամաւորներ ու գործիչներ աւարելով այն կողմերը, մեղք աջակցանք յաղթահարել ամեն արգելքներ, որոնք դնալով աւել և աւել շատանում էին շնորհով թշնամի կառավարութեան հալածանքներին, ձերբակալութիւններին, անդուր հարստահարութիւններին,

որ կիլիկիցի հային զոհում էր աւօրեայ հայի վերջին պատասխից և այդ հայը կարելու բոլր զանաւից: Մասնակի կոտորածներ ու հրդեհ ամբողջ քաղաքներ, ինչպէս Օգոստոս, Հաճին և այլ տեղեր, թիւրքի ձեռքը դարձել էր մի գէնը, որ սպառնում էր զիակ ու մոխիր դարձնել ամբողջ հայկական Ալեքիկան: Բայց մենք ոչ միայն չուրա հաւանքանք, այլ անխուսափելի տեսնելով հայութեան սպառնացող փառաւոր, նորանոր ջանքեր թափելիք Ալեքիկան կազմակերպելու ընդհանուր ապստամբութեան համար: Ալեքիկան արժանի էր մասնաւոր ուշադրութեան, որովհետեւ այդ վայրն իր աշխարհագրական դիրքի կարեւորութեամբ խիստ շօշափում է Արօսայի շահերը և աւելի մօտ է նրան: Այդ մի նպատակով պայման էր, որ նրա ապստամբական ազդեցիկ խուլ չը մնար Արօսային, ինչպէս, աւել, Հայաստանի ներսերում կատարված զէպքերը: Միւս կողմից պատմականապէս քաջարի գէոքոնցիներն արիւթթիւնն ինքն ըստ ինքեան զրաւական էր հանդիսանում ապստամբութեան աջակցութեան:

Բայց մեզ հարկաւոր էր նիւթական օգնութիւն, մեծ օգնութիւն: Եւստ տեղեր մենք զիմեցինք մասնաւոր կերպով, շատ աղաչելիք ամբողջ հայ հասարակութեանը նիւթական օգնութիւն հասցնել և շատերը դուրէ պատր յիշեն «Հնչակ» ներկայ տարւայ N 3-ի առաջնորդողը: Սակայն մեր բոլոր զիմեցիները, նախապէս զգուշութիւններն ու աղաչանքները հայ հասարակութեան կողմից անցնելի եղան: Աւ այդպիսով երկրորդ, երրորդ անգամ կրկնվեցաւ այն դատապարտելի, աննեքելի սխալը, այն ծանր յանցանքը, որ ունեցաւ հայութիւնը, խուլ մնալով մեր աղաղակին Սասունի ապստամբութիւնից ամբողջ երկու տարի առաջ՝ շարունակ: Այդ հասարակութիւնն այնքան աղէտ, դատարկ, անպարտաճանաչ, ետակը հանգիստացաւ, որ Սասունի սարսափելի դանից յետոյ էլ չուրեց հասկանալ իր քաղաքացիական մեծ պարտականութիւնը, որ անդիտացաւ իր ազգային ամենատուրը հոգսը — հարազատ ժողովրդի պաշտպանութիւնը:

Վասնայցած սրտով յուսահատված հայ հասարակութեան ինքնազոյ, մեծամիտ ու արտաախոս ինտելիգենտից և փառամոլ ու գծծի հարստից, մենք մեր ամբողջ յոյսը, հայ ժողովրդի փրկութեան յոյսը դարձեալ դրինք բացաւ ապէս նոյն իսկ Առաւելցութեանն նիւթական ոյժերի վրայ, Առաւելցութեանն, որ արդէն հայրենիքի սուրբ խորանի վրայ էր բերել վաղուց ի վեր թէ իր բարոյական, մտաւոր ու նիւթական ոյժերը և թէ իր անձնուէր անգամների կեանքը: Հայ պարզ, աշխատաւոր ժողովուրդը մեզ հետեւեց ամեն տեղ և իր ազգային բուռն և իր ազնիւ կեանքը միացրեց Առաւելցութեանն ծանր զոհաբերութիւններին հետ:

Միւթիւնը, եղբայրութիւնը հայ ժողովրդի և Առաւելցութեանն միջ այլ ևս անխախտ կերպով հաստատվել էր: Հայ ժողովուրդը զղացել, իմացել և տե-

սեղ էր, թէ այլ ևս որի՛ վրայ պէտք է դնէր իր փրկութեան յոյսը, թէ ո՞վ էր նրա անկեղծ ընկերը, պաշտպանը, առաջնորդը, թէ ո՞վ էր նուիրվել ամբողջովին ու անձնուրացութեամբ ժողովրդային սուրբ դատին: Իրեն ասպնջեցեցին փառաւորապէս, որ նա չէր սխալվում: Եւ այդ ժողովուրդն իր քրտինքի ու յորդ արեան կաթիլներով լծքեց կրթված ու քաղաքային, մանաւանդ օտար երկրներում գտնված, հայ հասարակութեան երեսին, որ գիտէր միայն դամբանական կարգալ հաղորաւոր կտորվածների անցյալ գերեզմանների վրայ, կենացներ կոնծել քաջերի անուան և ազա անգործ՝ վախկոտ սրտով կծկվել իր սաք բոյնում...

Աստուծոյ սոսկալի աղէտը թնդաց ամբողջ քաղաքակիրթ աշխարհում: Գիւղումատական մարմիններն իրաւանցման մէջ ընկան, գրեցին, ճառեցին և ազա կազմեցին մի ծրագիր բարենորոգումների, որ լեռան ծնած մուկն էր: Ասկայն այդ մուկն էլ մեռած ծնած էր: Եմբողջ մի տարի ձգձգվեցաւ այդ խնդիրը և ամբողջ երեք-չորս ամիս սուլթանը, յայտնի կենդանիի պէս, յամասեցաւ ընդունել ծրագիրը, իրան գաղտնի կերպով թիկունք ունենալով ուսաց կառավարութեան, որ փառաբար կեղծաւորում էր առերես, թէ Լնդլիսթի հետ պաշտպան է կանգնած հայութեան պահանջների ու իրաւունքների: Լնդլիսթն այդ ջեղուխտութիւնը հասկացաւ, բայց արդէն ուշ, երբ սուլթանի մերժման ապտակը ստացաւ: Նրա առջև բացված էր երկու խնդիր. — կամ այդ ապտակն ընդունել և կամ պատերազմ յայտարարել — թիւրքոն արդեօք, թէ՞ Ռուսին, թէ՞ մէկին և միւսին... Նա չէր կարող և չուզէր պատերազմել, աչքի առջև տեսնալով, որ մի սոսկալի վնէ հր բացվում իր առջև, և ապտակը կերաւ: Նա լռեց, լուռ էր արդէն Ռուսիան, որպէս և սրա դաշնակից Գրանտիան: Հայկական խնդիրը կրկին ծալվեցաւ և գրվեցաւ դիպլոմատիայի սեղանի կանաչ ծածկոյի տակ: Նա մեռած էր այլ ևս: Գաւ մէկ աղէտ էր հայութեան համար: Բոպէն սոսկալի էր. նա նոյնպէս եղբրական էր: «Ի՞նչ անել» — ու խնդիրն իր ահաւոր անցյալութեամբ կրկին գերանացել էր հայութեան առջև: Պէտք էր վճռել, պէտք էր պարզել, որոշել դրութիւնը, պէտք էր փրկել մահից հայկական խնդիրը:

Քաղաքական աշխարհում ներկայիս չափ նըպատաւոր, թէև ծանր, հանգամանքներ գուցէ գետ երկար ժամանակներ երևան չը գար: Պէտք էր գործել: Եւ Հնչակեան Առաւելութիւնը, միշտ արթուն սրահապան ընդհանուր հայութեան շահերի, գործեց: Պայթեց Ա. Պօլսի Յոյցը: Միևնոյն ժամանակ սեպտեմբերի սկիզբները հրահանգ էր տրված Արևիկային կազմ ու պատրաստ գտնվել ապստամբութեան համար, մինչև որ նրան կը հասնէ վերջին հրահանգը շարժելու կամ ոչ:

Ա. Պօլսի արխեպիսկոպ Յոյցը նորից հրեհեց, և այս անգամ աւելի խիստ կերպով, քան երբ և է, հայկական խնդիրը: Բոլոր եւրոպական տէրութիւնների շահերն այդ քաղաքում յանդուգն կերպով շօշափվեցան ու խտնվեցան: Հայկական մի շարժում Ա. Պօլսում անհրաժեշտ էր այդ անսակեայից, բոտ որում եւրոպական վեց մեծ պետութիւնների տնտեսային դործունէութիւնը և շփութված ու շշմլած գարթները, որոնց պատճառ եղաւ Յոյցը, — փառաւոր ապացոյց են այդ պատմական անհրաժեշտութեան: Եւրոպական դիպլոմատիան ստատիկ խլրովեց և ծանրանալով սուլթանի վրայ, վերջապէս ընդունել ավեց բարենորոգումների ծրագիրը: Տանջված ու ջարդված հայութիւնը կարծեց մի բոպէ շունչ քաշել և թւում էր, թէ այլ ևս աւարտ ստացաւ արեան սոսկալի շարքը, որի դադարման համար, արդարեւ, ժամանակը հասել էր: Բայց սուլթանները խաբեբաներ են և սոսկալիս Համիդը միշտ եղել է աւելի մեծ խաբեբայ, քան իր նախորդները: Բարենորոգումների փոխարէն նա բացեց հայոց արեան երակը, հեղեղատի պէս ողողելով ամբողջ Հայաստանը: Վիճակը հայերիս համար այլ ևս ձգված էր. — կամ կորուստ և կամ դիմադրութիւն, ապստամբութիւն: Եւ հաւոր ձգնաժամ, բօթ օրհասական...

Եւ Արևիկեան ապստամբեց: Արևիկեան հարցն աւելի մեծ աղմուկով բացվեց: Եւ այսօր վեց մեծ պետութիւնների մեծաթիւ նաւատորմը, միացած իրար հետ մոխրեցած ու խեղադար սուլթանի դէմ, սոսկալի փոթորիկ պէս ամպանում են թիւրքական ջրերում: Եւ ո՞վ գիտէ, թէ փաղը սուլթանը կամ նրա զլուխն իր անդը կը լինի: Ո՞վ գիտէ, որ նա չի զլորվել արդարութեան դահճի ձեռքով պատրաստած արխեպիսկոպիս զամբիւղում և կամ նոյն իր սուլթանի սրով թափած հայկական արեան ծովում:

Եւ մեն-մէկ օր՝ նորանոր դէպքեր: Լնդլիսթը դուրվում են արաղաթոխ անիւով: Եւ կը տանեն նրանք մեզ դէպի փրկութիւն: Տոկանք, դիմադրաւենք, յաղթահարենք այս վերջին ահաւոր բոպէն ևս — և մենք ազաւ ենք:

Հայութիւն, քեզ կը դիմում. ճանաչէր վերջապէս քո սուրբ պարտականութիւնը այս սարսափելի, բայց և փառաւոր բոպէին: Օգնութեան, Արևիկեան յաղթական աղաղակով օգնութիւն են կոչում:

ԿԵՅՅԵՆ ԶԵՅԹՈՒՆ ԵՒ ԿԵԼԻԿԵՆ.
ԿԵՅՅԵՆ ՅԵՂԼՓՈՒԹԵՐԵՒՆ ԵՒ ԱՊՍԵՄԲՈՒԹԵՐԵՒՆ.
ԿԵՅՅԵՆ ՀԱՅԱՍՏԱՆ ԵՒ ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԻՐԻ.
ԿԵՅՅԵՆ ԱՋԼՏՈՒԹԻՒՆ ԵՒ ՀԵԶԱԿԵԱՆ ԿՈՅՍԱՆՑԹԻՒՆ.
ՀՆՁԱԿԵԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ ԿԵՆՏՐՈՆ.
17 ՆՈՅԵՄԲԵՐԻ 95.

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Ներքև գետեզում ենք այն երեք Յայտարարութիւնների պատճէնը, որոնք Օգնութեան ապստամբութիւնից մի քանի օր առաջ բացարձակապէս ջրվեցան ամբողջ Արևիկայում և Հայկալի նահանգում:

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ
ԿՈՒԿԻԵՑԻ ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԻՐԻ
ՀՆՁԱԿԵԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ ԿՈՂՄԻՑ
.....
ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԻՐԻ ԿԵԼԻԿԵՑԻ.
Հայութեանը սպառնում է կորուստ: Հայ ժողովուրդն այսօր լողում է իր տաք արեան ճահճում և այրվում իր կեանքի:

Քի դժոխքում: Թշնամի, գաղանաբարոյ կառավարութիւնն իրան նպատակ է դրել խաղաւ ջնջել նրան: Բոպէն սոսկալի է. պաշտպանվենք. դիմադրենք.
ՀԱՅ ԶԱԽԵԱՆԻ ԿԵԼԻԿԵՑԻ.
Հայութեան գլխաւոր յոյն ու ապաւենը դուք էք. նա գլխաւորաբար ձեզնից է սպասում իր փրկութիւնը. դուք էք այսօր նրա մեծ ոյժը. ձեր ձեռքն է այսօր նրա կեանքի, նրա գոյութեան երակը: Ուրեմն, եղէք ձեր այդ դերի բարձրա-

Թեան վրայ. կատարեցէք ձեր սուրբ պարտականութիւնը. հար-
թեցէք Ազատութեան ճանապարհը:

ԿԵԼԻԿԵՑԻ՝ ՀԱՅԵՐ.

Հնչեալեան Կուսակցութիւնն ձեզ հետ է, ձեր շարքե-
րումն է: Փորձառու՝ ամբողջ տարիներ ընթացքում մեր մը-
ղած պատերազմով, իրաւացի՝ մեր պահանջներում, հղօր՝ մեր
իրաւունքով, յանդուգն՝ մեր անձնուիրութեամբ և վստահ-
մեր յաղթանակի վրայ — պէտք է նորանոր ճակատամարտեր
մղենք տուլի թշնամու դէմ: Մեր անմիջական նպատակն է
փրկել Հայ ժողովրդին սպառնացող կորստից և ձեռք բերել
նրա համար ազգային անկախութիւն և քաղաքական ազա-
տութիւն: Մեր ճակատամարտերից մենք պէտք է դուրս գանք
յաղթանակով և կամ արեան փառաւոր ասպարէզում գըտ-
նենք մի փառաւոր մահ:

ԵՂԵԱՅԵՐՆԵՐ.

Ոտքի՛ ելէ՛ք, տանք իրար մեր ձեռքը, ամուր կերպով
գրկենք միմեանց և ապա սուրբ ոգեւորութեամբ և քաջի ան-
վահերութեամբ, վառված մեր դատի սրբութեամբ ու վե-
հութեամբ, յանուն մեր Ազատութեան, յանուն մեր բարո-
ւութեան, յանուն ընդհանուր Հայ ժողովրդի՝ վեր բարձրա-
ցընենք մեր յեղափոխական գրօշակը, լիակուրծ հաններ մեր
յեղափոխական ձիւն և առաջ խաղանք բռնակալ ու հրէշա-
ւոր թշնամու դէմ: Այժմ՝ կամ երբէք. այլապէս Հայ ժո-
ղովուրդն այլ ևս կորած է:

ԿԵԼԻԿԵՑԻՆԵՐ.

Ոտքի՛ ելէ՛ք. մեր արիւնխում թշնամին այժմ այլ ևս
շփոթված և նեղված վիճակի մէջ է: Դա խեղդվում է այսօր
իր սրով ու թնդանթով կնտարած հայկական կոտորածի
արեան մէջ: Մարդասիրտը հրէշ՝ սուլթանը եւ իր կառա-
վարութիւնը մեծ յանցաւորներ են Հայութեան առջև, վայ-
րենի յանցաւորներ Եւրօպայի առջև, ամբողջ մարդկութեան
առջև: Դրանք հրէշաւոր յանցաւորներ են, այո՛, և պէտք է
կրկն իրանց ահաւոր պատիժը:

ՀԱՅԵՐ.

Այդ պատիժը մենք պէտք է տանք նրանց: Գերեզման-
ների միջից և Յատունի լեռներում ու Հայաստանում ցիրու-
ցան թափված մեր տասնեակ հազարաւոր եղբայր ու քոյր
նահատակվածներն աղաղակում են մեզ. գրանք ամենը սուլ-
թանական գաղաւթութեան զոհերն են: Թող մեր ամենքի սրը-
տերը միակերպ բաբախեն, արիւնան, առիւծ կարեն: Թող
մեր ձայնը և մեր սրերի շառաչիւնը որոտայ ամբողջ աշխար-
հի վրայ: Թող տեսնէ քաղաքակրթված մարդկութիւնը, որ
հայերս էլ նրան արժանի դաւաններ ենք և գիտենք կամ
յաղթել և կամ պատուով մեռնել:

ԿԵԼԻԿԵՑԻ՝ ԶԵՅԹՈՒՆ.

Ի՞նչպէս. որ միանք սարուկ, թշուառ, սովամահ. որ մեզ
կողոպտեն, տւերեն, անարգեն, սպանեն, մորթեն, կախն...
Ո՛չ մենք չենք ուղում, մենք չենք կարող, մենք չը պիտի
տանկենք այդպիսի մի կեանք: Սեղմենք սուսերը մեր ձեռքում.
Թող մեր սիրտը լինի նոյնքան ամուր, որքան այդ երկաթը,
և այդ երկաթը լինի նոյնքան կրակոտ, որքան մեր սիրտը:
Կիլիկիա, վերցնուր. քո մահակը, թին, կացինը. վերցնուր. քո
դաշոյնը, ուկիւղերը, հրացանը. վերցնուր, ինչ որ ձեռքիդ
հանդիպէ, ինչ որ քեզ կը պաշտպանէ. ամեն հարուած դէնք
է ժողովրդային պատերազմում: Կիլիկիա, ելի՛ր. թող քո
ամեն-մի սիրտը հարիւրի տեղ բաբախէ. ամեն-մի կորցրած
շունչդ հարիւրաւորին տայ կենդանութիւն: Թող քամից
փողփողվէ քո յաղթական գրօշակը և ապստամբական կոչը
որոտայ աշխարհի վրայ: Սուրբ է քո դատը, մեծ է քո գոր-
ծը, վսեմ է անկերդ: Թէ՛ մեռնենք՝ անմահութիւն է, թէ՛
յաղթենք — բարօրութիւն: Յառաջ ընդդէմ բռնութեան:

Մէկն ամենքի համար, ամենքը՝ մէկի: Հառա՛ջ:

ԿԵՑԵՐ՝ ՀԱՅ ԺՈՂՈՎՈՐԴ.

- ԿԵՑԵՐՆ ԸՆԿԱՆՈՒԹԻՒՆ ԵՒ ԱԶԱՏՈՒԹԻՒՆ.
- ԿԵՑԵՐՆ ԱՊՍԱՄԲՈՒԹԻՒՆ ԵՒ ՅԵՂԱՓՈԽՈՒԹԻՒՆ.
- ԿԵՑԵՐՆ ՀԱՅԱՍՏԱՆ ԵՒ ԿԵԼԻԿԵՑ.
- ԿԵՑԵՐ՝ ՀԵՂԱԿԵԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ

**ՀԵՂԱԿԵԱՆ ՅԵՂ. ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ
ԿԵՆՏՐՈՆ.**

ՀԱՅՏԵՄԲԵՐ, 1895.

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ ԶԵՅԹՈՒՆԻ

ԱՌ՝ ՀԱՅ ԺՈՂՈՎՈՐԴ.

ԿՈՉ.

ՀԱՅ ԺՈՂՈՎՈՐԴ.

Հին ծանօթ ձայն մ'է, որ քեզ հետ կը խօսի այսօր,
ներկայ ծանր պարագաներուն մէջ: Զէյթունն է որ իր ձայ-
նը կը հանէ և կը կոչէ քեզ իրեն հետ միատեղ ոտքի ել-
նել փրկելու ամբողջ Հայ ժողովուրդն իր անվերջ տոտա-
պանքէն, իր սարկական վիճակէն: Զէյթունն է, որ իր կըրծ-
քին ամբողջ ուժով և իր անվախ սրտին ամբողջ եռան-
դով կը կոչէ ոտքի ելնել, ապստամբիլ վատ և զաղեր բըռ-
նակալութեան դէմ: Զէյթունն է, որ պատերազմի կենէ
տապալելու Հայութեան վրայէն ստրկութեան լուծը, ջախ-
ջախելու ստրկութեան շղթաները: Այլ բա՛ւ եղաւ:

ՀԱՐԱՅԱՏ ԵՂԵԱՐԷ.

Դամը հասեր է. կրակ ու բոց կը թափէ հայութեան
գլխուն մեր վայրենի թշնամին ահա տարիներէ ի վեր. այդ
կրակն ու բոցը այսօր մենք կուզենք թափել անոր գլխուն:
Որովհետեւ մեզ պէտք է ազատ կեանք, քաղաքական ազատ
և անկախ կացութիւն մը, ինքնուրոյնութիւն և բարեկեցութիւն:

Մենք բարձր պիտի պահենք Հայութեան սուրբ դրօ-
շակը, մենք բարձր պիտի պահենք Կիլիկիոյ և Զէյթունի
կարմիր գրօշակը, մենք բարձր պիտի պահենք Հնչեալեան ցե-
ղափոխական Կուսակցութեան գրօշակը, որ ահա վեց-եօթ
տարիներէ ի վեր համարձակ կը ծածանի հայութեան ազա-
տութեան ամեն կուռներուն մէջ, կուռներ, պատերազմ, որ ինք
սկսեր է և ինք կը մղէ մինչև օրս արեան և տանջանաց
ճանրայով:

ՀԱՅ ԺՈՂՈՎՈՐԴ ԿԵԼԻԿԵՑ.

Զէյթունցիքս յարած Հնչեալեան միութեան, անոր հետ
այսօր արեան դաշտը կերենք ձեռք բերելու համար այն
ամենը, ինչ որ Հայաստանի և Կիլիկիոյ անկախութեան և
ազատութեան անհրաժեշտ և պէտք է: Զէյթունցիքս կա-
ղաղակենք քեզ՝ օգնութիւն, աջակցութիւն և գործակցութիւն,
կաղաղակենք մեր ալ ազատ լեռներէն, որք մեր այնքան կը-
ռիւնները տեսեր են, որք այնքան անգամ մեր արիւնով ներ-
կուեր են: Կաղաղակենք յանուն մեր տանեակ հաղաթներով
կոտորուած Հայաստանցի եղբարց և Հայութեան փրկութեան:

Մի՛ Լքանիր, առիւծ եղի՛ր և մեզ ձեռք ձեռքի տուած
յառաջ խաղանք: Մենք պիտի կուռնք, պիտի թափենք մեր
արիւնը մինչև վերջին կաթիլ: Մենք կամ պիտի տեսնանք
Հայութիւնն ազատ և կամ մեր մահը այս սուրբ հողին
վրայ: Ազատ ապրիլ և կամ մեռնիլ... Օգնութիւն...

ԿԵՑԵՐՆ ՀԱՅԱՍՏԱՆ ԵՒ ՀԱՅՈՒԹԻՒՆ.

ԿԵՑԵՐՆ ԿԵԼԻԿԵՑ ԵՒ ԶԵՅԹՈՒՆ.

ԿԵՑԵՐ՝ ՀԵՂԱԿԵԱՆ Յ. ԿՈՒՍԱԿՑՈՒԹԻՒՆ.

ԿԵՑԵՐՆ ԱԶԱՏՈՒԹԻՒՆ ԵՒ ՅԵՂԱՓՈԽՈՒԹԻՒՆ.

ՅԱՐԱՅ... ՅԱՐԱՅ՝ ԿԵԼԻԿԵՑ ԵՒ ԶԵՅԹՈՒՆ:

**ՀԵՂԱԿԵԱՆ Յ. ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ
ՎԱՐՉՈՒԹԻՒՆ ԶԵՅԹՈՒՆԻ.**

ՀԱՅՏԵՄԲԵՐ, 1895.

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

ԿԵԼԻԿԵՑ ՀԱՅ ԺՈՂՈՎՈՐԴՆԵԱՆ

**ՀԵՂԱԿԵԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ ԿԵԼԻԿԵՑ
ՆԱԿԱՅԱՅԵՐՆ ՎԱՐՉՈՒԹԵԱՆ ԿՈՂՄԷ.**

ՀԱՅ ԺՈՂՈՎՈՐԴ.

Հասան այն բողոքները, որք կը պահանջեն յեղափոխա-
կաններէս և ամեն մի հայէն կատարել իր սուրբ պարտակա-
նութիւնը դէպի ազգը, դէպի Հայ թշուառ ժողովուրդը:
Հասան բողոքները վճռական քայլերին, երբ Հայ ժողովուր-
դըն ալ պէտք է մղէ ընդհանուր պատերազմ իր վատ ու
անարգ թշնամին դէմ: Հասան բողոքները, երբ Կ. Պոլսի,
Երզրումի, Կեսարիայի, Եգլատի, Մարզուանի, Թոփթի, Ը-
մասիայի, Վարդնիսի, Սասունի քաջ կարիճէրու և անմահ
նահատակներու արեան ծովին մէջ պիտի հոսի նաեւ Կիլիկի-
ցի հայի տաք արիւնը:

ԿԵԼԻԿԵՑԻ՝ ՀԱՅԵՐ.

Հասան բողոքները, այո՛, երբ պիտի արդար վրէժ լու-

ծերը հրեշտակ սուրբանի հրամանով թափուած տանեակ հաղարաւոր հայերու անմեղ արեան, որ ծովի պէս տարածուեց Հայաստանի վրայ: Իբրեւ նախնաձախնդիր Հայ ժողովորդի բազմիկ, ազատութեան և գոյութեան, իրեւ վրէժխնդիր անոր կրած սարսափելի տանջանքներուն ու թափած արեան— մենք՝ Ալիկիկի հայերս, մենք՝ ամբողջ Ալիկիկիան պէտք է միահամուռ ջանքով վերջին հարուածը տանք մեր թշնամիին և ազատենք մեր սուրբ Հայրենիքը և մեր սիրած ժողովուրդն անոր գաղանային ճիրաններէն, որ խրուած հայու մարմին մէջ ծործոր կը հոսեցնէ անոր արիւնը մեր սուրբ հողերուն վրայ:

ԵՂԵՐԴԻ, ԲՈՅՐԵՐ.

Այս անգամ մեր մօտիկ անցեալին վրայ, եօթ-ութ տարուան մէջ Հնչակեաններու մղած կռուին փառաւոր շարքին վրայ: Յիշենք այս ծանր վայրկեաններին անոնց անմահ, սուրբ անունները. ունենանք մեր աչքին առջեւ անոնց նահատակուած արիւնշաղախ դիակները, անոնց ծօծող մարմինները կախաղանէն: Հաճին, ժիրայրը քո հարազատ զաւակն էր, որ իր կեանքը տաւ տարիներէ ի վեր նուիրեց Հայութեան ազատութեան գործին: Հաճին, Համբարձումը (Մուրադը) նոյնպէս քո հարազատ զաւակն է և հարազատ եղբայրը ժիրայրին. նա ալ Սասնոյ ապստամբութեան առաջնորդը եղաւ Հնչակեան գրօշակի տակ: Հաճին, ժիրայրը Հնչակեան գրօշակը գրկելով անմահացաւ իր սուրբ մահով. թիւրք բարբարոս կառավարութիւնը կախաղան հանեց զանկայ, և Համբարձումն այսօր Մուշի բանտին մէջ իր ստացած սոսկալի տանջանքներէն մահամեծ վիճակի մէջ է: Ալիկիկի, քո այդ մեծ զաւակներն իրենց համար, Ազգին համար քեզ կը կոչեն վրէժխնդիր լլալ:

ՀԱՅՆԻՐ.

Ինչ ենք մենք այսօր: Ոչինչ: Ինչ կուղենք լլալ: Ազատ, անկախ, ինքնուրոյն և բարեկեց: Մեր կրած այնքան տանջանքներն աւելի շատ եղան, քան մեր թափած արիւնը. մեր թափած արիւնն ալ աւելի շատ եղաւ, քան մեր տանջանքները: Հայ ժողովուրդի ճակատագիրը միմայնեցաւ թըշուառութիւններէն. Հայ ժողովուրդի ճակատագիրը նաեւ պայծառացաւ անոր ազատութեան ծարաւէն: Գաղանաբար թըշնամին երբէք մեզ չէր խնայեր ջարդելու, այսօր ալ մեզ կը ջանայ խալառ ոչնչացնել: Օրէնք, իրաւունք, կայք, գոյք, կեանք, պատիւ — ամեն անկառ ոտնակոխ քաւ, անարգեց մեր եղբայր, մեր կին, մեր քոյր, մեր երեխայ. խոցողեց, կոտորեց, բանտարկեց, աքսորեց, կախեց ծերեր, մանուկներ, մեծեր, երիտասարդներ, պղտկներ. քանդեց, կործանեց, այրեց, հրգեհեց մեր տներ, գիւղեր, շէներ, ամբողջ գաւառներ. սրոյ և հոյ ճարակ քաւ ամեն բան, ինչ որ հայու աշուն կը կրէր և հայ էր: Մեզ այսօր մատնած է կորստեան: Ընհաշտ, կատաղի, վայրենի նա Հայութեան համար գերեզման է պատրաստեր:

ՀԱՅՐԵՆԱԿԻՑՆԵՐ.

Ահա մեր ներկան, ահա մեր վիճակ, որմէ ալ չը պիտի ազատինք, եթէ ոտքի չենենք և մեր կամքը, մեր վրձնական որոշումը մեր արիւնով և պատերազմով չը ցուցնենք: Եթէ լուռ ու մնչիկ կեցուիք և մեր աեղը մնանք թշնամին մեզ կը մորթէ ոչխարի պէս: Այլ ևս անոր հետ հաշտութիւն չըլլար և չը պիտի ալ ուզենք, որ լլալ: Ուրիշ ելք, ուրիշ միջոց չէ մնացեր, եթէ ոչ յեղափոխել մեր կեանքի այս դառն և կործանիչ պայմանները, եթէ ոչ ապստամբիլ և մեր սրտին, կամքին խելքին ամբողջ եռանդով ու արիւնքով տապալել մեր վրայէն այն դժոխային լուծը, որ մեզ խեղդամահ կընէ:

ՀԱՅՆԻՐ, ԱՆԻԿԻՑՆԵՐ.

Ոտքի ելէք. թող ձեր ժողովուրդին անվախ գնդերը Սուէտից լեռներէն մինչեւ քաջ Զէյթունի պանծալի դաշտները, մինչեւ թշնամիի ձեռամբ հրգեհուած՝ այրուած ու մոխրակոյտ սիրելի Հաճնոյ ապառաժները. թող արեւելքէն ալ մինչեւ արեւմուտք, թող ամբողջ Ալիկիկի հայերս մի մարդու պէս ոտքի ելնենք, կուլենք, կոտորենք, զարնենք, զարնուինք, սպաննենք, սպաննուինք... Մեր սուրբ և անբռնաբարկ իրաւունքն է ապստամբութիւնը. մեր ազգային ու մարդկային պարտականութիւնն է ապստամբութիւնը. մեր գոյութեան պաշտպանութեան միակ ղեկն է ապստամբութիւնը. մեր բողբոջութեան ու հանգստի միակ գուռն է ապստամբութիւնը: Յառաջ... հաւաքուինք, խմբուինք Հնչակեան

արիւնների և նուիրական գրօշակին տակ, որ Հայերս անցեալի մահէն հանեց դէպի այսօրուան փառաւոր կռիւր և դէպի վաղուան յաղթական արշալոյսը, որը մեր արեան գնով պիտի փայլի ամբողջ Հայութեան դիմուն: Յառաջ, եղբարք, յառաջ, քոյրեր... Թող ամեն մի հայ ինչով կրնայ, ինչպէս կրնայ, ուր որ կրնայ, երբ որ կրնայ պատերազմի մեզ հետ, ոգևորուած եղբայրական և ժողովրդասիրական սուրբ սիրով, իր անուան ու պատուին վրայ երգուելով ամբողջ մարդկութեան առջեւ հաստատ, անձնուրաց, իր հոգւոյն ամբողջ կրակով մինչեւ իր արեան վերջին կաթիլ միշտ կուլի, միշտ պատերազմի, միշտ առաջ խաղալ և այդպիսով սրբաբանալ Հայրենիքի սուրբ հողին և ժողովրդեան սուրբ գաւառին համար...

Յառաջ, եղբարք, ոտքի ելնենք: Ապրիլ աղաւթ կամ մեռնիլ...

ԿԵՑՑԵ՛ ՀԱՅ ԺՈՂՈՎՈՐԻՐ.

ԿԵՑՑԵ՛ ՀԱՅԱՍՏԱՆ ԵՒ ԱՆԻԿԻՑ.

ԿԵՑՑԵ՛ ՅԵՂԱՓՈԽՈՒԹԻՒՆ ԵՒ ՀԵՇԱԿԵԱՆ Յ. ԿՈՒՍԱԿՅՈՒԹԻՒՆ.

ՀԱՅԱԿԵԱՆ ԿՈՒՍԱԿՅՈՒԹԵԱՆ

ՆԱՀԱՆԳԱՅԻՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆ

ԿԻԼԻԿԻՈՅ.

Հ Ե Ռ Ա Գ Ի Ր Ն Ե Ր.

ՄԵՐ ՍԵՓԱԿԱՆ ԹՂԹԱԿՑԻՑ.

Նոյեմբեր 13.

Իդէսիան և Չօք-Մարզուանը ևս ապստամբեցան: Զէյթունի Հնչակեան գնդերը մի շարք յաղթութիւններ տարին: Ապստամբութիւնն ընդունում է ընդհանուր ծաւալ: Ոգևորութիւնն անկարագրելի է:

ՌԵՑՏԵՐԻ ԳՈՐԾԱԿԱՆՈՒԹԵԱՆ.

Կ. Պոլս, Նոյեմբեր 11.

Օէյթունում գտնված թիւրքական զօրքերի զուարտակը, որը վերջերս հայ ապստամբների մի խմբից պաշարված էր, իր ղեկներով ու ռազմավարներով անձնատուր եղաւ և հայերը ներկայումս գրաւած են ամբողջութեամբ և այն զիբերը, որոնք գտնվում էին զօրքերի ձեռքի տակ:

Նոյեմբեր 12.

Գեսապաններից մի քանիսը, մասնաւորապէս Մըստըր Էբրէրտ Բրիտանական գործակառարը (Chargé d'Affaire), խորհուրդ տվին Գեսապ մեղմութեամբ վարվել Զէյթունի հայերի հետ և կատարել վերջերս կառավարութիւնից եղած խոստումները:

Օէյթունում կառավարութիւնը խոստանում է հայերին, որ նրանք չը պէտք է ենթարկվեն խոստումներին և նրանց պիտի թողարկվէ վերադառնալ իրանց գիւղերը, եթէ նրանք յետ ատն թիւրք գերիներին և զէնքերն ու ռազմավարութեանը, որ վերջերս ապստամբները գրաւեցին թիւրքերից:

Հայերը շատ լաւ են վարվում իրանց անձնատուր և դաժ թիւրքական զօրքի գումարտակի հետ:

Մեծ գժուարութիւններ են զգացվում թիւրք կառավարութեան կողմից իր առաջագրած զինուորական միջոցները գործադրելու մէջ. մասամբ զրա պատճառն է Միքայիլով յեղափոխական շարժումների մեծ ծաւալ ստանալը, մէկ էլ այն է, որ բեդիշները, որոնք ներկայումս կանգնեցան, մերժեցին թողնել իրանց տները, գաւառային գրուդների յարձակումներից:

ՄԵՆՏՐԵԼ ՆԻՐՈՒ ԳՈՐԾԱԿԱՆՈՒԹԵԱՆ.

Կոլոնիա, Նոյեմբեր 11.

„Cologne-ի Gazette“-ի Կ. Պոլսի թղթակիցը հաստատում է, թէ ապստամբութիւնը խիստ արագութեամբ տարածվում է Զէյթունի գաւառում սկսած այն ժամանակից, երբ պաշարված զօրանոցը ղեկնեց եղաւ: Գեսապ մինչեւ ներկայ ժամանակս որ և է կերպով օգնութիւն չէ հասած: Աչքի առջեւ ունենալով փառնաւոր կացութիւնը, կառավարութիւնը որոշեց վերականգնել բաղմամբ բեդիշի (պահապարկ զօրք) գումարտակներ:

ԹԵՏՏԵՐԻ ԳՈՐԾԱՎԵՐԴՈՒԹԵԱՆ.

Պարիզ, նոյ. 12.

Այսօր տեղի ունեցած միներսերների ժողովում 10-կրուա, ծովային միներսերը, յայտարարեց, թէ չորս նաւերից բաղկացած նաւատորմի մի բաժինն այսօր կէս օրին ճանապարհ ընկաւ դէպի Պիրէ, ծովակալ Մեդրէի հրամանատարութեան տակ:

Նապօլի, նոյ. 14.

Խառական նաւատորմի առաջին բաժինը, որը հինգ նաւերից է բաղկանում, կարճ ժամանակից պիտի մեկնէ դէպի Թիւրքական ջրերը ծովակալ Ակցինի հրամանատարութեան տակ:

Ալեքանդ, նոյ. 14.

Պետերբուրգից լուր է հասել, թէ Ռուսական Միջերկրականի նաւատորմը, որ հինգ նաւերից է բաղկանում, երրորդ ծովակալ Կոլոգերտի հրամանատարութեան տակ կարճ ժամանակից Միջերկրականի պիտի վարդապետայ, առաջին անգամ այցելով Զմիւռնիա:

Բերլին, նոյ. 17.

Գերմանական զրահաւոր «Մոլտէն» Զմիւռնիոյ է հասել, միւսին ժամանակ «Մոռ» զրահաւորը, որը Մարսիլիոյ դէմ եղած նաւային ցոյցին մասնակցեց, հրաման ստացաւ Թիւրքական ջրերը զնալ:

Հոմ, նոյ. 17.

Բացի երկու զրահաւորներից և մի յաճարակից երկու սուրպէզ-հրետակիրներ և հինգ հրետակիրներ ևս հրաման ստացան պատրաստ լինել: Պետերբուրգական միներսերը հըրամայեց որ 80,000 մարդ, որոնք առաջնայ դարձան բանակին պէտք է միանային, դեկտեմբերի սկզբից զինւորագրվին:

Մարսէյ, նոյ. 17.

Միացեալ նահանգների յաճարակ Սան-Ֆրանսիսկո երէկ երեկոյ ճանապարհ ընկաւ դէպի Թիւրքական ջրերը:

**ԵՆԻՐՈՂԱԿԱՆ ՄԱՍՈՒԽԻ ԱՌԱՋԻՆ
ԿԱՐԾԻԲԸ.**

«Daily News»-ի (Գէյլի Նիւս) նոյ. 13-ի առաջնորդողից Զէյթունի խնդրին գալով, ուր հայերը մերժեցին մորթիւն և մեկից ցոյց տվեցին Թիւրքական մի զօրանոց գրաւելու չափ ապահոված ոյժ, այն փոխադարձ վնասները, ինչպէս Թիւրքական տեղեկութիւնները հաղորդում են, բազմաթիւ մահացած յաղթողների անխնայ խժոճութիւնների հետ, չափաւոր են: Բայց բնաւ ապացոյց չը կայ, թէ հայերն իրանց զէնքերն արտաւարել են, հետեւելով Թիւրքական գաղանձութեան:

Զ Ե Յ Թ Ո Ւ Ն.

Զէյթուն քաղաքն ունի շուրջ 1500 տուն հայ բնակիչ և 30-ի չափ թուրք վերջիններս բոլորն ալ հայերէն լաւ գիտեն: Քաղաքը գայմազամանիստ է: Մարաշէն, որ կը քրտնաւի Ասոր-Տաղի ստորոտը, դէպի հիւսիս 12 ժամ կը տեւէ: Այս նշանաւոր քաղաքը շինուած է բաւական ամուր փոքր բերդի մը շուրջ կողքերուն վրայ: Տները խիտ առ խիտ, քով-քովի շարուած են իրարու վրայ, կարծես սանդուխի ձեւով այդ բերդի զանաւորները կը շրջապատեն. քանի մը աներ հազիւ կը գտնուին բերդի գլուխը: Քաղաքն իր երկու կողմէն հասող գետակներու կեդրոնը կը գտնուի, որոնք կուգան և քաղաքին անմիջապէս ներքեւ տեղի մը կալմելով՝ կը միանան իրար: Նոր-նոր սկսած են, բուն քաղաքէն դուրս, այդ ջուրերու միւս եզերքի զանաւորներուն վրայ տուններ շինել, որոնք միացած են երկու կողմէն երկու փայտէ կամուրջով:

Հասարակութիւնը քաջ և պատերազմասէր է, իր օրերն անցեր են կռիւներով, արշաւանքներով. ամբողջ շառասուն տարուան ընթացքի մէջ իր պատմութիւնն արիւնով է գրված. իր ամբողջ հոգիքը գրեթէ արիւնով են ներկուած: Այդ բոլոր դէպքերը, որոնց նմանք երբեք պատահած չէ հայկական անխնայութեան ժամանակ ուրիշ ոչ մի տեղ, բոլորն ալ գրեթէ և կարգադրելով ձեռք կուղարկեմ:

Զէյթունի գլխաւոր զիւղերն են.

Ֆրանսիացի 300 տուն, ամբողջ հայ: Գիւղը շինուած է իր անունը կրող գետակէն բաւական, բարձր զանաւորի

մը վրայ, դիրքը բաւական ամուր է, դէպի հիւսիս քիչ բարձր ժայռեր ունի, ուր թէ ապաստանի ժողովուրդը կարող է դիմադրել երկար ժամանակ: Հիւսիսային արեւելք բլրի մը գագաթին վրայ ունի ս. Կարապետ անունով վանք մը 20-ի չափ սենեակներով: Այս գիւղէն դէպի Մարաշ և Զէյթուն 8-ական ժամ է:

Պապան երկու գիւղ է, մէկը հայ 250 տուն բնակիչներով, իսկ միւսը թուրք 150 տուններէ բաղկացած, իրարմէ մէկ քառորդ ժամ հեռաւորութիւն ունին: Այս գիւղը Զէյթունի և Հաճընի ճիշտ կեդրոնն է, մօտաւորապէս 14-ական ժամ հեռաւորութեամբ: Այս գիւղի դիրքը շրջալայ ամբողջ տեղերէն անսովի և նշանաւոր է. ասոր գիւղն ամենաւերջնոր տեղերէն մէկն է այս կողմերը, քիչ հեռաւորութեամբ ունի մէկ անսովի բերդ:

Պապան իր շրջակայներու մէջ ունի երեք-չորս հայ գիւղեր 300 տներէ բաղկացած և կը պատկանի Անտըրըն կոչուած գայմազամութեան, որ կը բաղկանայ մանր մուկեր ցրուած գիւղերէ և 4-500-ի չափ թուրք բնակիչներէ:

Աւապաշ կամ Արեգի 300 տուն զուտ հայ բնակիչ ունի, ժողովուրդը քաջ և ճարպիկ է: Զէյթունի կըռիւններուն միշտ մասնակցած է և ամեն անգամ նախայորձակ իրենք եղած են և շատ ցոյց ու փառանք տուած: Զէյթունի և Մարաշի ճիշտ կեդրոնն է, իւրաքանչիւրէն 6 ական ժամ հեռաւորութեամբ: Գիւղի աները ցրուած են 3-4 ժամ հեռաւորութեամբ սարածութեան վրայ, Շաւապէ կ'ոչուած բարձր բլուրի արեւելք, հարաւ և հարաւային-արեւմտեան կողքերու վրայ մինչև ճիւղն գետի եզերքները: Այս գիւղի արեւելեան կողմը տեղի է ունեցած Զէյթունի վերջի նշանաւոր և պատմական պատերազմի առաջին ծակատամարտը, ուր ընկած են նախապէս զէյթունցի քաջերէն շատեր, որոնց ոսկերիտիքը թաղուած են նոյն օրուան կուռի վայրին վրայ մեծ փոսի մը մէջ և վրան հաղիւ ծածկեր են քանի մը քարերով:

Միւսալ կամ Աւագ-Ալալ 250 տներէ բաղկացած, ամենքը քաջ ու անվեհեր: Տները ցրուած են իր անունով լերան չորս կողմերուն վրայ, դիրքը միջակ է. Զէյթունէն 1-2 ժամ հեռաւորութիւն ունի:

Թէլէ մէլէք, 80 տուն հայ բնակիչներով, որոնց 30-ը կը գտնուին առանձին ձորի մը մէջ, իսկ մնացածները 2-3 ժամ հեռաւորութեան վրայ ցրուած են բլուրներու և ձորերու մէջ: Զէյթունի և Մարաշի մէջտեղն է 7-ական ժամ հեռաւորութիւն:

Հաճի Տէրէ 50 տուն հայ բնակիչ ունի, Զէյթունէն մէկ ժամ հեռաւորութեամբ:

Ֆէնք (Վանք), 40 տուն բնակիչ հայ, Զէյթունէն մէկ ու կէս ժամ հեռաւորութեամբ: Այստեղ կան վանքի և նշանաւոր շէնքերու փլատակներ:

Պարեւոր և անսովի վայրեր կարող են համարուիլ նախ Զէյթունը, որ կը գտնուի երեք սարերու մէջտեղ. տեղւոյն այդ դիրքը և ժողովրդի պատերազմասէր բնաւորութիւնը և պարեւորական շարժումները չեն վերաբեր Թուրք կառավարութեան աչքէն և այդ ամենը մէկ անգամէն ճշնշելու համար քաղաքէն հաղիւ քառորդ ժամ հեռաւորութեամբ բարձր տեղի մը վրայ շինած է զօրանոցը ուր կը գտնուին 4-500 զինուորներ, բաւական թնդանթներ, որոնց բերանն ուղղուած է ճիշտ քաղաքին վրայ հարկ եղած ժամանակ ոմբակոծելու համար:

Ամենաառաջին և անսովի կարելի է համարել Նապանը, նշանաւոր է իր Հաճընի և Զէյթունի կեդրոն բլուրուն պատճառաւ: Խիստ անսովի և ընդարձակ բերդ մը ունի Նապան-Ֆէրի անունով, որն ամայի է և աւերակ: Նապանէն մի քանի ժամ հեռաւորութեամբ կան կարեւոր լեռներ, որոնք կարող են իրենց մէջ հաղաքներ պահել, եթէ ձմեռուան սաստիկութիւնը և ուտեստը արգելք չըլլան:

Ամենազօրեղ և անսովի են նաև Վիւրէտի և Բերդը և Աւագ-Այալան իրենց ընդարձակ և նշանաւոր քաղաքներով: Վիւրէտի բերդը մանաւանդ մեծ տեղ ունի հայ պատմութեան մէջ Ռուբինեանց գահակալութեան ժամանակ, ուր կատարուել են պատմական մեծ նշանակութիւն ունեցող դէպքեր: Ասոնք Զէյթունէն 5 ժամ հեռաւորութեամբ հայ գիւղերու կեդրոնը կը գտնուին: Սոյն բերդի և Վաւայի մէջտեղէն է, որ կը վազէ Զէյթունի գետակը և մէկ ժամ

հետևորդութեամբ կը խառնուի ճիշտին հետ: Մէկ փոքր բերդ կայ Գրեոնըղէն կէս ժամ հեռավորութեամբ և մի փոքր ալ Զուգուր-Հիսարէն մէկ ժամ հեռավորութեամբ ամառի վանքի մը մօտ, սակայն ասոնք այնքան նշանակելի տեղեր չեն:

Գալով Զէյթունի և իր շրջակայ գիւղերու տեղային և այլ բնակչութեան, ամբողջ Զէյթունը կը բաժնուի չորս թաղերու, որոնք ունին իրենց թաղապետները, ի շտան-աղաները. այս վերջիններս բաղմաճիւղ գերդաստաններու են բաժանված. գերդաստաններ կան, որոնք միեւնոյն մականունով 100-150 տներէ բաղկացած են և ազնուական կը համարուին: Ժողովուրդն իր գործերն, իր դատերը, իր վեճերը և այլն և այլն, բոլորը կը կարգադրէ այդ մեծերու միջոցով: Մէկ խօսքով կարելի է անուանել նահապետական ազնուականութիւն: Գիւղերն ևս ճիշտ ասոր նման ունին, միայն մէկ, երբեմն մինչև երեք մեծեր, քեահեաներ, որոնք կը կարգադրեն ժողովուրդի ամբողջ գործերը և ժողովուրդն ալ իր կողմէն միշտ կը հպատակի իր մեծերուն:

ՏԵՌՈՐԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹԻՒՆ ՍՈՒՇՈՒՄ.

Մուշ, 27 սեպտեմբեր 95.

Մտնալ 24-ին տեղւոյս Հնչակեան Մանաթմարի անդամաց տրուած վճռագրոյն համաձայն՝ երեք լիւեւորներու ձեռամբ սպանութեան յայտը փորձ մը կատարուեցաւ մէկի յայտնի մասնիչ Տ. Բարսեղի վրայ, որ ինչպէս յայտնի է իր չարաշահութեան համար քանիցս դատապարտուած և առնուներս Պատրիարքարանէն ալ նոյնի նկատմամբ տնօրինութիւններ էին եղած:

Յայտնի մասնիչը ձամբու վրայ բռնուելով 3 գնտակով կը մահանայ, զորս կրնդունէ բերնին, քնքոսիքին և վզին վերայէն, և զիսկը կառավարութեան կողմէ թէեւ եկեղեցւոյ դուռը կը նետուի, բայց հայեր բնաւ չեն մօտենար և նորէն կառավարութեան ձեռամբ բահանայի մը կուտան թաղել որ միայն մի «չայր մեր» ըսելն խոստովանած է: Այս գէպքին առթիւ ցայժմ բանտարկուած են չորս անմեղներ, Մոկուշք գիւղի գերդաստան և թաղականներէ մին, իբր յոնցաւորներ իրենց գիւղի մօտ լինելուն գեպքին, իսկ Մշէն 2 վաճառական, Անթառնեան Միսաք և պիթիլացի Բօղոսեան Մուրտա աղաներ, որք կամբաստանուին թէ առաջուց վեճ ունեցած են յիշեալ մասնիչի հետ. բայց կը յուսացուի որ ճանչցուելով իրենց անպարտութիւնը, վերջիվերջոյ աղատուին, թերեւս շատ մը նեղութիւն կրելէ վերջ:

ՀՐԸՏ.

ՏՐԱՊԵՉՈՒՆ ԿՈՏՈՐԵԾԸ.

Տրապիզոն, 21 հոկտ. 95.

Կը յուսամ որ ստացած էք հոկտ. 7-ին գրած նամակս, որուն մէջ նկարագրած էի մեր յուսահատական դրութիւնը: Այս նամակովս ալ, որ ահամայ ուշացաւ, պիտի աշխատիմ կարելի եղածին չափ ամփոփ տեղեկութիւններ տալ, որչափ կարելի է այս շրջի, անստոյգ և անապահով կացութեան մէջ: Բաղաբիս մէջ շուրջը նայող մարդ մնացած չէ, անկարելի է ամեն բան ստուգել. անոր համար նկարագրութիւնս ալ ահաւոր իրականութեան շատ քիչ մասը կը պարունակէ: Սպանուած են 400-էն 1/2-ը հայ, զիւղերուն մէջ սպաննուածները ասանց հաշուելու սկսած. 26-ի երեքշաբթի օրուան ժամը չորս և կէսէն սկսած դուրսը գտնուող հայերը առհասարակ սպանուած են, ուղանալիս Տրապիզոնի ուղևորուած են կրնայ ըսուիլ: Սպանուողներուն մէջ կը գտնուին վանքի, Մշէնի ձամբորդներ, որոնք բոլորովին կորսուած և անձանթ են. միայն քահանան թաղած է 220 հոգի, մէկ մասը ծովը թափած են (քանի մը օր վերջը զիւղները դուրս նետուեցան), մէկ մասը Տէյիլմէն. Տէրէի աւաղուաններուն մէջ ծածկած և մէկ մասն ալ լիբրաց գերեզմանատունը փոսի մը մէջ լեցուեցան. միայն Տրապիզոնէն 400 մարդ կենթադրուի. սպանեալները ոտքերնին չուան ձգած կը քաշէին գերեզմանատուն կամ ծովը կը տանէին: Առայժմ անկարելի է սպաննուածներուն ճշգրիտ մէկ մահացուցակը պատրաստել. աչքի եկողներէն մէկ քանին անունները թուեմ, իրենց զբաղումով և տարիքը:

Տիրապետեան երեք եղբարք, 35-40 տարեկան, վաճա-

ռական. Մանուշարեան Մինաս հայ-բողոքական, պատւաճանաչ մարդ մը, վաճառական, 45. Գէթվաճեան Պօղոս, վաճառական, 35. Թիւրքեան երկու եղբարք, վաճառական 35-40. Մարկոսեան Միքայէլ, վաճառական, 40. Արդարեան Սահիան և որդին, վաճառական, 18-55. Գարակէօղեան Գէորդ, վաճառական, 50. Միհրան Բ. Շաւարշ (Շաւարշ ԼՓ. ի որդին), 20. Սահիան Տէր-Միքայէլեան Կարնեցի, վաճ. 35. Միհրան Սիւքեմեան, քովիսիոնէն, 20. Յովհաննէս Աւագեան, վաճ. 38. Միհրատ Լսայեան, վաճառականական գրագիր, 20. Միսակ Թաթևոսեան, ոսկերիչ, 20. Պօղոս Մալխասեան, ուսուցիչ, 25. Արշակ Գարբէլեան, Սանասարեանէն շրջանաւարտ, գրագիր, 25. Միլտիչ Գարագաշեան, ուսուցիչ, 25. Պետրոս Յովսէփեան, գրագիր, 27. Հաճի Յովհաննէս Միւճէսէմեան, պոգալ, 55. Մսալմաճաւ Աղամ, 45. Մազմանեան Յարութիւն, էլէվտի պէղալ, 30. Վալարեան Գալուստ, ուսուցիչ, 30. սափրիչ Կարապետ, 32. Պօղոս Կոթողեան, որդի իր վաճ. 27. Յովհաննէս Ինճիկեան, անգամաւոր ծերունի (սուրճ խմած տները սրճապետը պարսք սեպեր է գիւցաղնական գործին մօտ նակցիլ ու գանակի հարուածով մը սպաննել զայն). Միւհիպեան Մենճիկ, Թաթևարացի ուսուցիչ, 50. Խաչատուր Մալաքի և որդին, գինեպան, 20-50. Բիւզանդ Կուկունեան, կոշկակար, 18. Յակոբ Գրքճեան, պղնձագործ, 20. Մարգիս Վարդանեան, պոգալ, 48. Յովակիմ Վարդանեան, սափրիչ, 40. Յովհաննէս Կիւրճիկեան, պէղալ, 50. Խոսրով Հէքիմեան, 35, ալուրի վաճ. Պղրիչ Այնճիկեան, ներկարար, 40. Խանճի Հաճի Մարտիրոս, 45. (Խանին մէջ սպաննուած են նաև Վանեցի հայ ձամբորդներ). Դամադոր՝ Միլտիչ, 42. Արապեան Արմենակ, 20. Պօղոս Արապեանի որդին. Խահուէճի Օգաշ, 50. Սերոբ և Սահիան Կոթողեան, մսալմաճաւ, 40-45. պագալ, Համադասպին աղան, ոսկերիչ, 17. Գէորդ Կոթողեան, պոգալ, 50. սափրիչ Յովհաննէս, 35. շաքարագործ Մեղաւորեան 20, են. են: Ինչպէս ըսի, անկարելի է բոլորին առնունքը գիտնալ, պէտք է պատիլ, հարցնել, փնտռել և այդ ընելու համար պէտք է տունէն դուրս ելլել ինչ որ բրած չեմ կրնար ընել:

Յարձակու մին պարագաները նախորդ նամակովս գրած էի համառօտ մը: Սկստ. 23-ի շաբաթ օրը, երբ հայերը դուքին կուսակալին մօտ գանգատելու ուրբաթ գիշերուան յարձակման փորձին համար, կուսակալը բոլորովին ապահովեցուց զիրենք, թէ վտանգ չի կայ. երկու շաբթի օր սակայն բացարձակապէս յայտարարեց, թէ պէտք է յանձնեն Պահրիին ահաբեկողները, հակառակ պարագային չի կրնար երաշխաւորել հանրային անդորրութիւնը. հայերը որովհետեւ այդ գործէն տեղեկութիւն չունէին, չէին կրնար երեւակայական յանցանքները ստեղծել կուսակալին սպանալիքը ցածցնելու համար ու բոլորովին ապահով իրենց ուղղամտութեան վրայ, անպատակ պատրաստված ջարդի գողոնիքին, անհոգ գանուեցան, մանաւանդ երեքշաբթի օր ժողովրդին մէջ շատերը կը տարածային թէ բան չի կայ, խանութները բացէք: Շաբաթ օր (23 սեպ.) Հիւսիսայիններուն տեղեկագրուած էր կուսակալին տարօրինակ պահանջներին, կառավարութեան և խառնախմբ սպանալիք շարժումը. հիւսիսայինները սկանջնուն վրայ փառաւորապէս քնացան: Ամօթ իրենց ներկայացուցած քաղաքակրթութեան. Մենք շատ գայթակղած ենք այն քաղաքակրթութեան մասին. ճշմարիտն ու բարին (ինչպէս կրնան) կը ձգտին, արդարութիւն կը քարոզեն ու կը լծողուն որ հարկաւոր անմեղ պատուական մարդիկ պարզապէս թեւեղին կապուած ցանի բռնուին, շուներու մահովը մոռնին:

Հայերու վրայ յարձակեցաւ հարձակութեամբ կառավար բանակին վրայ յարձակին. հայերը բոլորն ալ անդէն էին, պէտք ալ չունէին զինուելու, որովհետեւ ապստամբական միտում, զիսաւորութիւն ոչ ալ զիրք ունեցած չեն. կանոնաւոր զօրքը կը հասնէր և պաշտ պօղոքին չը կրցած ըրածը կը լմնցնէր: Ինչ վայրագութիւններ չի պատահեցան. կորսված զուրկներ գնդակի պէս օդին մէջ կը նետէին. շատերը մաս առ մաս կը սպաննէին. նախ սկանջ մը, քիթ մը, սրունք մը, թեւեր, յետոյ աղիքները դուրս կը թափէին. կրնան թէ մսալմաճաւ Աղամը ոչխարի պէս մորթիլէն ետքը, անգամները մաս մաս կորեցին ու սպանդանուցին կեռերէն կախուած ոչխարի միսի պէս խանութը կախեցին, տարաբաղդ մագործին պէս սպաններին լաւութիւնը բարձրաձայն հռչակելով: Վայրագութիւններու պատմութիւնը

շատ տխուր է, անցնելը թալանին. տուն չի մնաց, վաճառ-
տուն չի մնաց որ չը կողոպտեին, դրամ, զգեստ, գոհարե-
ղեն, ապրանք, կահ կարասիք. շատ քիչ տուններ այսօր ա-
զատ մնացին թալանէ: Քանի մը վաճառատուններ թուեմ,
իրենց կրած վնասները վերիվերոյ հաշուելով: Տիրապետեա-
նեցու տունը, վաճառատունը և գրասենեակը, պարսպատ դը-
րամ, ապրանք ևն. 8,000 իրա. Մախոխեան Արիստակէսի
տունը և մաղաղան գրամարկղը խորտակուած, ապրանք ևն.
9-10,000 ոսկի. Թիւրքեան եղբարք տունը և մաղաղան 2,000
ոս. Սրապեան վաճառատունը 7,000 ոս: Արապեան հաճի Գէ-
որդ երկու վաճառատուն 10-12,000 ոս. Ֆէլմիաճեան հաճի
Սիմոն տուն և մաղաղա 8,000 ոս. Մնացականեան եղբարք
երկու խանութ 500 ոս. Ժամացոյց ծախող Միհրան 2,000
ոս. Օտապաշեան Յակոբ վաճառատուն 1,500 ոս. Մարիմեան
Պետրոս (ոչ արտորուածը) 5-600 ոս. Խարայեւեան Նիկողոս
Սինկերի գործակալ 400 ոս. Փաշաճեան եղբարք երկու խա-
նութ 1,500-էն աւելի վաճառք. Յակոբ Շաւարշին պիւ-
ռօն ամբողջ թալանուած, գրամարկղը խորտակուած. Մարտի-
րոս Զարարեան կարնեցի 2,000 ոսկիի շափ ապրանք թալ-
նուած. Տէր-Համբարձումեան Գէորդ տուն և մաղաղա կա-
շիկ վաճառական 1000. Անտոն կաշիկ վաճ. 800 ոսկի. Հէ-
քիմեան Յովսէփ ողելիցներու գործարան 600 ոսկի. Հաքա-
րագործ հաճի Մինաս դրամ և ապրանք 300 ոս: Ատոնք
յիշածներս ևն, շատերը դեռ չեմ յիշեր, էսնաֆներու,
պագալ, գինեպան, արհեստաւոր ևն, ևն, բոլորին ալ խա-
նութները կողոպտուած են. մնասը անհաշուելի է. մինչև ան-
գամ տունները կիններուն գործած քթմանի մշտուաները կը տա-
րած տարած են, գոհարեղեն, զարդ, զգեստ, բան ձգած չին:
Կողոպտուած չեն Էլմիքէիսեանին, Խանէտանեանին, Պալլար-
եանին և Պոյեաճիսեանին խանութները:

Մարդասիրական նշանաւոր գործ կատարեցին Փոէնե-
րը. բազմաթիւ հայ ընտանիքներու աղաւթման պատճառ և-
ղան. Փոէն Ժողէֆ շատ լաւ խնամեց դպրոցը խնոնուած հա-
ղարէ աւելի երկու սեռէ և ամեն հասակէ անձերը, տասն
օրի չափ պահեց Ֆրանսական դրոշակին ներքեւ. ուսելիք,
թէյ, դեղ մատակարարեց ամենուն. Փոէն Ժողէֆ հայ է,
զուարթ մարդ մը. անդին յոյները և հայ կաթողիկոսներէն շա-
տեր շատ անդամ թեկան հայոց նկատմամբ, թուրքերուն յա-
վըշտակած սուրբին մեծ մասը յոյներու քով պահուած է.
փակեցին իրենց դռները նոյն իսկ իրենց անմենամտերիմ բա-
րեկամին երեսին, նոյն իսկ եղան յոյներ ալ որ հայ սպան-
նեցին. մինչև հիմալ ատելութեամբ կը նային հայերուն վը-
րայ, որոնք արդէն շուարած չլինած են, անտէր անպաշտպան:
Ջարդը դադար առաւ ժամը տաս և կեսին, թէպէտ մինչև
չորեքշաբթի առտու (սեպտ. 27) տակաւին մարդ սպաննե-
ցին. շատեր իսլամութիւն ընդունեցին մահէն ապատելու հա-
մար: Գիւղերուն մէջ հայերը և կիները տաճիկներ կը խօ-
սին և իսլամական անունը կը կրեն: Չորեքշաբթի օր քա-
ղաքը արդէն Խաթաբէ Էօրֆիէյի տակ էր, տունները կը պա-
շարէին և «թէյիմ օրուն» կը պօռային, իբր թէ ապստամ-
բող ըլլար. մինչդեռ ողջ մնացող խեղճերը հազիւ թէ յող-
թեմական ոտքն ինչպիսի ժամանակ կուենային լալով և թա-
գաւորին համար աղօթք ընելով. չը մոռնամ բսկ թէ շա-
տերը ինքեքերնին թուեցին, շատեր ալ վտանգաւոր կերպով
հիւանդացած են:

Երկու անգալ մարմինի շէնքի հրացան գրաւեր ևն,
որպէս թէ հայերէն, մինչդեռ կառավարութիւնը ինք բաժա-
նած է զանոնք պաշտպանութիւն ու ջարդէն ետքը նորէն ևս
առած: Բոլոր ողջ մնացող հայերը, շատ աննշան բացառու-
թեամբ, բոլորն ալ բանտարկեցին: Զինեւորական տեսան և
նախաքննիչ յանձնաժողով մը ալ այնուհետեւ տիրած սար-
սափը, թշուառութիւնը, նոր ջարդերու հաւանականութեն
յառաջ եկած սրտադողերը կարելի չէ նկարագրել. կառա-
վարութիւնը սկսաւ ապացուցութիւններ մուրալ խնդիրը հա-
յերուն վրայ ծանրացնելու. չեմ կարծեր թէ մալի շափ
բիծ մը կրցած ըլլան գանեւ, վաթնգի հայերը երբեք անցի
տուած չեն ու միթէ ներքի է Պահրի փաշային վրայ ու-
վողքը քաշող երկու հոգիի համար քաղաքին ամբողջ հայ
ժողովուրդը պատասխանատու ճանչնալ ու հրացանի բռնել.
կայսերական կառավարութեան անօրէնութիւններուն ասկէ ա-
ւելի հաստատմանութեամբ հպատակիլ կարելի չէր, լոկ մըն-
ջիկ գլուխ ծնեցին կատաղած խուժանին և զինեւորներու սու-

րին ու թուրին առջև, առանց ամենափոքր դիմադրութեան:

Նախաքննիչ յանձնաժողովը, քաղքին երեւելներէն բաղ-
կացած, բանտարկեալները հարցաքննելով մէկ մասը հետը-
հեռէ արձակեց. մէկ մասն ալ զինեւորական տեսանին զըր-
կեց. բանտին մէջ դեռ շատեր կան, մէկ քանիններուն ա-
նունները միայն կրնամ թուել. Տ. Վահան քահ. Խոյեան,
Մանուկ Թադոսեան, Տօքթ. Ինչէրեան, Հեթում Տիրատու-
եան, Յարութիւն Շահրիկեան, Գրիգոր Վարդանեան (ուսու-
ցիչ), Յակոբ Տ. Մկրտիչեան, Սափրիչ Ստեփան, Արմենակ
Կասապեան (վարպետին փոքրաւորը), Արշակ Կասապեան,
Մարտիրոս Արապեան, Յարութիւն Արապեան, Յակոբ Շա-
ւարշ, Պետրոս Մարիմեան (արտորուած), Մնացական Խուշափ-
եան, Ռուբէն և Ամբրոս Թուխիկեան, Հաճի Վարդան Անան-
եան, Նշան Կալայճեան, Պօղոս Մախոխեան, Կարապետ Խա-
չոյեան, Պէքիարեան, Մանուկեան, Կիրանոսեան (այս 3-ը ու-
սուցիչ. Կարանոսեանը ջարդէն քանի մը օր ետքը եկաւ.
երէկ լսեցի թէ այս երեքը պիտի ճամբեն եղբր, բայց չեմ
գիտեր թէ ստոյգ է): Ինչպէս ըսի, շատերուն անունը չեմ
կրնար գիտնալ. հայ գիւղերէն ալ բաւական մարդիկ բան-
տարկուած են:

Բանտարկեալներուն շատերուն դէմ, որոնք զինեւոր սկան
տեսանին ենթարկուած են, յայտնի ատելութիւն կայ, մա-
նաւանդ կառավարութիւնը կաշխատի Հայոց վրայ ծանրա-
ցրելը ջարդին պատասխանատուութիւնը. թէպէտ լաւ տեղե-
կութիւն չունիմ, սակայն կը լսեմ թէ մէկ քանինները օրէն-
քին ու արդարութեան կոչում ընելով պաշտպաններ են զի-
րենք և այս բանը կառավարութեան այնչափ ալ հաճելի
եղած չէ անտարակոյս: Կառավարութիւնը միւս կողմէն կաշ-
խատի խժգժութեան ապացոյցները ցրուել. ջարդին մասնակ-
ցող բոլոր համալսերը, պաշտպանութիւնը իրենց գիւղերը
զըկած է. հիմա ալ Տրապիզոն գտնուող բոլոր զօրքը կարճ
միջոցի մէջ մաս-մաս Երզնկա կը զըկեն և տեղը նոր զօրք
բերել կուտան:

Առաջնորդարանը փակ, ժողովուրդին մէկ մասը սպաննուած,
մէկ մաս բանտարկուած, մէկ մասը սարսափի աղիւցեցութեան
ներքեւ շուարած ապուշցած, ահա Տրապիզոնի հիմակուան փի-
ճակը. թշուառութիւնը, աղքատութիւնը տիրած են ամեն տեղ.
աչքովս տեսայ շափահաս աղջիկներ որոնք պատառ մը հաց
կը մուրային... Ռաբախուի լուր մ'է անտարակոյս բարե-
կարգութեանց իրատէին պաշտօնական հրատարակումը, բայց
հոգաւ. 3-էն մինչև հիմա մեր վիճակը մալի շափ փոխուած
չէ. այս անտէր ժողովուրդը պէտք է խնամել. փտանդը, մա-
հը դեռ մաղէ կախուած սուրի պէս անոր գլխուն վրայ կը
ձօձայ. ով որ պարտականութիւն կրցայ մեզ միթմարելու
թող աճապարէ, քիչ մը ետքը թերեւս ուշ կըլլայ:

Չ.

ԵՐԶՆԿԱՅԻ ԳԵՆԵՐՈՒՆ ԸՆԳՆԵՆՈՐ ԿԱՏՈՐԸ:

Կ. Պօլիս, 6 նոյ. 95.

Երզնկայէն եկած «սրհէլմտեիլ» (առողջ ենք) հեռա-
գիրներէն և այլեայլ զոյցներէն իմացած էմք թէ Երզնկա-
յի մէջ կատարած պատահած է և մեք մինչև այս շարժումն
լուր տոնելին կը յուսացինք թէ, թերեւս պիտի, թեթեւ ու
աննշան դէպք մը պատահած ըլլար, որովհետեւ երկուշաբթի
օր պատահած է այդ կատարածը և երկուշաբթին բաղարի օր
(առեւտուրի օր, երբ բոլոր գաւառին գիւղացիները միահա-
ղոյն քաղաք կիչնեն) ըլլալով ցորենի հրապարակի վրայ գիւ-
ղացիներու միջեւ ծագած վեճ մ'է անտարակոյս: Ասկից առջեւ
չէմք յուսար, քանի որ չօրոք գորաբանակի կեդրոնատեղին
էր Երզնկա. նոյն իսկ տեղացիները մինչև վերջին վայրկեանը
մարաշխաթին (միւշխար Զէքի փաշա) խոստումներուն փտա-
հելով աւուր և սրտաճմիկ իրողութեան զոհ կերթան, ինչ-
պէս որ պիտի տեղեկանաք հետեւեալ գրելիքներէս, որոնք
Երզնկայի հոգաւ. 26 թուակիր նամակներէն քաղածներս ևն,
տակաւին զուրկ աւելի ընդարձակ տեղեկութիւններէ:

Արդէն Երզնկայէն հոգաւ. 14 թուականով մօտաւորաւ վը-
տանդէն բոլորովին ահ ու սարսափի մէջ ըլլալին գը-
րած էին, այնպէս որ նոյն ամսոյն առաջին օրերուն մէջ տե-
ղի պիտի ունենայ եղբր կատարածը, գիւղացի թուրք խուժա-
նին կողմէ որոնց կառավարութիւնը դէնք բաժնած է եղբր

կանխառն: Այս միջոցներուն՝ ապագան արդարացնելու համար, կառավարութիւնը որպէս թէ առջեւ կանոնէ. յետոյ ամսոյն 18-ին ուրբաթ օր Տրապիզոնի ծանր դէպքերը ծանուցանող փոսթման երթալուն թուրք ժողովուրդը նորէն կը խորանուստի և խեղճ հայերը սոսկումի մէջ կը մնան. բայց միջեւը դարձեալ ապագան արդարացնելու դիտումով քաղաքին ամեն կողմերը զօրք կը կեցնէ, որով այդ օրն ալ կանցնի: Բայց որովհետեւ, հայերը ետեւէ ետեւ այս բաները կը տեսնեն, նամանաւանդ նոյն ամսոյ 20-ին կիրակի օր թըրքաց կողմէ գումարումներն ու պատրաստութիւնները կատարածին, բշ. օր, որ բազարի օրն է, կը մտածեն և կը վարանին խանութ բանալու. ուստի կորոշեն և առաւօտեան կանուխ հայոց քաղաքական ժողովը իր գլուխը ունենալով առաջնորդական անգագահ տ. Գէորգ հայրը միւշիւր Զէքի փաշային կերթան և կրսն. «Աստահաբար դիտենք որ թըրքաց մէջ գումարումներ եղած են հայերը կատարելու համար, ուստի հայերը այսօր ահ ու դողի մէջ ըլլալով խանութ բանալու կը վարանին. ինչ կրսնք, էֆէնտի հաւրէթ լէւրի, բանին թէ ոչ: Չեղ յանձնուած ենք, դուք ինչպէս որ ըսէք անանկ պիտի ընենք. ինչ է ձեր հրամանը.»

Միւշիւր Զէքին կը պատասխանէ.

«Խաղաղորդս, սուլթանին, գլխուն վրայ կերպնում որ քանի որ ես ողջ եմ, ձեր մէկին քիթը չը պիտի արխնի և մէկ փարայ մնաս չը պիտի ըլլայ. գացէք ժողովողին ըսէք որ խանութին բանան և հանգիստ գործերնուն նային:

Ասոր վրայ ժողովուրդը, բշ. օրուան, մանաւանդ աշնան եղանակի ամեն պէտքերու տունը ըլլալը ճոխ առևտուրի հրապոյրէն մզուած վստահաբար խանութին կախին բանալ. հազիւ թէ մէկ ժամու բացած են, ժամը 3ը 10-ը ահա անցած (բ. թ.) յանկարծ փթառիճ և ճիւմին և այլ թուրք գիւղերու վայրագ խուժանը զինուած յարձակումը կախի, ամեն կողմ ահ ու մահ սիւսերով: Ամեն հայ ինքզինքը ազատելու կը փութայ խանութին բաց թողելով և փախչելով: Այդ սոսկալի յարձակումը, սպաննելը, զարնելը կամ թախնելը ժամը մինչև 7-ը կը տևէ և այդ 4 ժամուան մէջ հարիւր հայեր տեղն ի տեղն իսկ կը մեռնին և 300 հարիւր հոգի ալ ծանրապէս կը վիրաւորուին: Բացի թաշխանէն և 3-4 խանութներէ ինչպէս նաև Սուլթան-նէն բոլոր շուկան, որ միայն, հայերու խանութները կը գտնուին, կը թախնուի, առանց մէկ փարայի ապրանք մնալու, միայն չոր տախտակները մնալը կը գրեն: Այսպէս չորս ժամէն վերջ մէկ պօրօղանով մը (փող) կոտորածը կը դադրի և թուրք վայրագ խուժանը կը ցրուի, ինչպէս նաև ասպին անդին ապաստանող հայեր դուրս կեննեն իրենց թաքստոցէն տուն փախելու համար, որոնք ևս շուկային բոլորը պաշարող զինուորներու սուլթաններուն զօհ կերթան: Այսպէս ժողովուրդը տունները ապաստանած մինչև փոստային օրը, շաբաթ, ահ ու սարսափէն դուրս չեն կրնար ելնել և տանիքներէ իրարու կերթնեն:

Գալով գումարին հայ գիւղերուն, որոնք 15-16 հատ են իրաց առեալ 3-4 են բոլորն ալ կոտորածի և տալի կը տրուին, այնպէս որ գիւղացիներ հարիւրներով, որ կաղաթին, ոտքերնին բորիկ, գլուխնին բաց, մերկ ու անօթի, խեղճ ու կրակ վիճակի մէջ կը թափին քաղաք և փողոցները տուններուն առաջ հաց, հաց կը պօռան. բոլորը կիններ, անչափահաս աղջիկներ և հարսեր, որ գլուխին կաղաղակէին: Բայց ով ողորմի, քանի որ ամենէն հարուստն իսկ ողորմութեան կարօտ է: Յիշեալ նամակագիրը կաւեցնէ թէ «մենք ամենէն առաջ փութացինք ցորեննիս աղալու, մեր ցորենն ալ չըղացքը մնաց, հիմա ծաղկոյիլի հանդէպ մենք ալ և մզիլ հետ ամենքն ալ ոչ ալուր ունին և ոչ հաց», ալ երևակայեցէք անկարագրելի խեղճութիւնը. բառին բովանդակ նշանակութեամբ թշուառութիւն:

Պոստան դալէն ասդին 4-5 օր ալ ամեն ընկերնիս մօտացած, շուարեր մնացեր ենք. կեանքը դառնացեր և մենք Պոլիս գտնուող երկնացիքս, որ միւսնոյն խանի մէջ կը գրտնուինք, իրարու քով հաւաքուելով սե բաղկերնիս և դժբաղդ վիճակիս կրսնք, կը խորհնք: Պատրիարքարանն անկարող է ու է դարման տանելու, Պոլսոյ գեսպանները բոլորովն ականջնին խլացուցեր են, չեն ուզեր մօտիկ ընել և ամեն օր անդամ մը մին կուգայ Պատրիարքարան թէ բախի (յանդիմանութիւն) կրնէ, իբր թէ հայերը ըլլան կոտորած-

ներուն տեղի տուողները:

Երբ սոսկումի մէջ կը վարանին խանութ բանալու և Զէքիին խօսքին փոստահարով գործերնուն կերթան խնդրէն որ ալ տեղի պիտի տան: Ինչքան անխոհեմ ըլլան որ տանկ բանի մը տոթի տան. և տակաւին անխիղճ գեսպաններն ալ իրենց պարզութիւնը, անամօթութիւնը ու սարկութիւնը պարակելու համար կեննեն սուտեր կը յերիւրեն և ստոր անոր, ապուշ պարզամիտներու ալ, կը հաւատացնեն թէ հայերը Երզնկայի մէջ մղկիթի մը վրայ յարձակում տուեր են, իմամը սպաններ են (Քիւրքի խօսք), որով թուրք ժողովուրդն ալ գրգռուելով ջարդ տուեր է: Այս ինչ անիմաստ սուտ է, մինչդեռ այդ խօսքն խուժանին առաջնորդած ժամանակ սպանուած է:

Անշուշտ Տրապիզոնի կոտորածը ցարգ լսած էք, որուն նման չէր լսուած ու մտքէ ալ չէր անցած: Երզնկան զայն գերազանցեց. Կարին ալ տեղի սոսկալին. Տիարաղէքիւրէ ալ անբերանելի խժգոսութեանց լուրեր. Կարբերդի, Կիւմիւշեանէի և Ատաբաղարի հայերէ արգէն շատեր զոհ գնացած են, Աղ-ճիսար ալ նմանապէս, ինչպէս նաև Պիթլիքը և այլն: Կարբերդէն ալ վայրկեանէ վայրկեան կոտորած կը ստատուի, որովհետեւ երէկ միսիմարներէ Պոլիս հեռագիր եկած է, թէ քաղաքը պաշարման մէջ է: Վերջապէս գաւառները ստակայի վիճակի մէջ, ու քաղաքակիրթ Եւրօպան 19-րդ դարուն վերջերը ձեռքեր ծոցը դրած կը թողու հին աւուրց քրիստոնեայ ժողովուրդ մը վայրագ թիւրքերու ձեռքով իր վախճանը գտնէ:

Նամակս վերջացնելէ առաջ չը մոռնամ ըսել, թէ յարձակող խուժանին պարագլուխ ու առաջնորդներն են եղեր Վահիթ պէկ (փթառիճ գիւղի փաշան), Իւրֆէթ պէկ (միւշիւր Զէքիի սեր կապերը, (առաջին թիկնապաշ), Քիւրքի խօսք և մանուսածի հաճի Հիւսէյինը:

Կոտորածին զոհ գնացածներէն առ այժմ գիտցածներս են. Սրապեան եղբարը (Նշան և Կիրակոս), Հոդիլողեան Նըշան, իր եղբայրը վիրաւոր. Հմայեակ Մշիկեան, Սիդրակ Փաշալեան, Մ. Պոյաճեան, Միհրան Լիւլէճեան, Նշան Գոյում-ճեան (սոկերիչ), Մանուշեան իր տղերքներով, Ա. Հալէկեան, Մ. Գուրեան:

Սոյն նամակը ղրկելէ առաջ պարտք կղզամ քանի մը ծանօթութիւններ ևս ես աւելցնել, որք պիտի կրնան ինչ-ինչ մութ կէտերուն լուսաւորութիւններ ապա:

Միւշիւր Զէքիին, այդ ճիւղին ընթացքը հայոց հեմ յիշեալ կոտորածին մէջ արգէն ակներեւ ուղացոյց մ'է թէ հրամանները Բ. Գոնէն կը ծնին և իր խոստումը ուրիշ բան չէր, բայց իմէ իր գաղանային կրից լիութի յագուրդ տալու գիտաւորութիւնը. Երզնկացիներու երթալ գաղանի մը խորհուրդ հարցնելը որսը անոր ճանկերուն մէջ յանձնել ըսել է, գաղանի մը որ Սանոյ 6 հազար կոտորեալներու գիակներով չը յագեցաւ:

Վահիթ պէկ խուժանին առաջնորդներէն մին այն մարդն է որ 1892-ին փթառիճ գիւղին մէջ 14 տարեկան հայ աղջիկ մը բռնաբարելով, իբր վարձատրութիւն իր այդ սրկորագործութեան վեհափառ մութիմատի շքադրամով վարձատրուեցաւ:

Հաճի Հիւսէյին այդ թուրք մոլեռանդներու խմբին գլխաւորն է որ ասկից 3-4 ամիս առաջ իր այժմեան խորհուրդը հայերը ջարդել, իրադարձել ուղեց, սակայն չը յաջողեցաւ, շնորհիւ զինուորականի մը որ փառաւոր գաս մը տուաւ իրեն, քիթն ու բերանը ուսեցնելով: Զինուորական մը որ իր անկողնակալ բնաւորութեանը համար Երզնկա արտորուած է:

ԴԵՆՈՅՆ:

Յօդուածներ, լղկակցութիւններ, տեղեկութիւններ և գրամ ու մանդատ ուղարկել հետեւեալ հասցեով. —

M. Beniard — 22, Ormiston Road, Shepherd's Bush, London, W. (Angleterre).